

**ՆՈՐ ԱՐՏԱՊՐԱՏԵՍԱԿԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԱՋԱՊԱՑՄԱՆ
ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԴԱՐՁԵՐ**

Վ. Դ. ԱՌԱՋԵԼՅԱՆ

Տնտեսագիտության բեկմածու, դոցենտ

Հ. Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

գործ դասախոս, ասիստենտ

Ռ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Տնտեսագենտ

Զեռնարկությունները մրցակցային առավելություններ ապահովելու և մրցակիցների նկատմամբ առաջատար դիրք գրադեցնելու համար պետք է գնահատեն ներքին և արտաքին հնարավորությունները, որոնք կնպաստեն արդյունավետ ռազմավարական որոշումների կայացմանը: Կատարված ուսումնասիրությունները ցուց են տալիս, որ ծեռնարկությունների կողմից թողարկվող արտադրատեսակների մրցունակությունը շատ հաճախ ընթանում է ոչ թե արտադրանքի սպառնան ոլորտում, այլ նոր արտադրատեսակի ստեղծման փուլում, երբ դրվում են նրա ապագա մրցունակության հիմքերը:

Մրցունակության գործոնների ամբողջության մեջ հատուկ տեղ է գրավում արտադրանքի որակը՝ որպես գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների իրականացման արդյունք, ինչպես նաև նոր շուկաների ծեռքբերման ու ծախսերի կրծատման ռազմավարական միջոց:

Գիտատեխնիկական հեղափոխության առկա փուլը բերեց այն ապրանքների թողարկման և սպառնան աննախադեպ աճի, որոնցում հաշվի են առնվազում գիտատեխնիկական առաջընթացի նվաճումները: Տեխնոլոգիաների և արտադրանքի գիտատեխնիկական մակարդակը մրցակցային առավելության ապահովման որոշիչ գործոն է, քանզի պահանջում է նորամուծական գործընթացի արագացումը: Ուստի, երբ ծեռնարկությունները հնարավորություն են ստանում արտադրությունում ներդնել առաջավոր տեխնիկա, տեխնոլոգիական գործընթացներ կամ թողարկել նոր արտադրատեսակներ՝ բարձր որակական հատկանիշներով, ստանում են մրցակցային առավելություն:

Այդ է պատճառը, որ մրցակցային պայքարում հաջողության հասնելու համար ծեռնարկությունները ծգտում են ապահովել տեխնոլոգիական առավելություն նույնիսկ մենաշնորհի իրենց ընտրած հիմնական ոլորտներում, որոնք անհաղթահարելի են իրենց մրցակիցների համար:

Այդիսի ռազմավարության մշակումը ենթադրում է, որ պետք է թողար-

կել այնպիսի արտադրանք, որը մոտակա ժամանակում անհասանելի կլինի իրենց մրցակիցներին: Իրականում դա կապված է նոր արտադրանքների մշակնան և դրա հաշվին նոր նպատակային շուկաների գրավման հետ: Այդ իսկ պատճառով ձեռնարկության ընդհանուր ռազմավարության ընտրությունից առաջ անհրաժեշտ է որոշել մի շարք սահմանափակող գործոններ:

Ուսումնաափությունները ցույց են տալիս, որ հանրապետության արտադրական ձեռնարկությունները չեն համապատասխանում շուկայի մրցակցության բարձր պահանջմներին՝ չունենալով նորարարական ներուժի բնութագրերի գերակայություն: Այսպես, արտաքին տնտեսական գործունեության ասպարեզում գիտական հետազոտությունների և մշակումների տեսակարար կշիռը 1988-2010 թթ.-ին կազմել է մոտ 0,28% ընդհանուր ներդրումների ծավալում, իսկ 2010 թ-ին՝ 0,015%:

Նորարարական ներուժը բնութագրվում է նորարարական գործունեության ռեսուրսներով, որը ներառում է՝

• հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակեպությունների գործունեության թիվը և արդյունավետությունը,

- հետազոտությունների և մշակումների արդյունավետությունը,
- հայտնագործությունների, արդյունաբերական նմուշների թիվը՝ ըստ գիտական ճյուղերի, դրանց հեռանկարայնության և արտոնագրերի, հեղինակային իրավունքների քանակը, այդ թվում՝ նորությունների գծով,

- գիտական դեկավարների, մասնագետների, համակարգողների՝ ըստ գիտական ճյուղերի կառուցվածքը և որակավորման մակարդակը,

- ֆինանսավորման՝ պետական, տեղական, համատիրական, ինչպես տարածաշրջանային, այնպես էլ հատուկ նպատակային ծրագրերի շրջանակ-ներում ձեռնարկությունների պատվերներով,

- նյութա-տեխնիկական բազա՝ աշխատանքների հագեցվածությունը արդի տեխնիկական և տեղակատվական տեխնոլոգիաներով, անհրաժեշտ նյութական ռեսուրսներով և այլն,

- նորարարության և նորմուծական գործունեության գիտական տեղեկատվություն, ինչպես տվյալ երկրում, այնպես էլ արտերկրում, գիտատեխնիկական գրականություն և այլն,

- գիտական սպասարկման իիմնարկներ, նորամուծական տեղեկատվական կենտրոններ, գրադարաններ, հրատարակչություններ և այլն,

- գիտական դպրոցներ, դրանց դերը և տեղը հայրենական և համաշխարհային գիտության մեջ:

Հարկ է նշել, որ ռազմավարական վերլուծության շնորհիվ հնարավոր է ի

հայտ բերել արտադրական ծեռնարկությունների նորամուծական ներուժի գարզացման բազմաթիվ ուղղություններ, որոնք կարող են նպաստել, որ ծեռնարկությունները մշակեն արդյունավետ մրցակցային ռազմավարություն: Որպես մրցակցային ռազմավարության մշակման և ընտրության հայտանիշներ՝ կարող են հանդիսանալ ինչպես ծեռնարկության ներուժը, այնպես էլ շուկայական պայմանները բնութագրող հայտանիշները: Այդ հայտանիշները կարելի է դասակարգել հետևյալ հաջորդականությամբ՝

1. մրցակցային ռազմավարության իրականացմանն ուղղված ծեռնարկության ներուժը բնութագրող հայտանիշներ,

1.1. արտադրության մասնագիտացումը,

1.2. արտադրանքի կյանքի պարբերաշրջանի գերակա փուլը ծեռնարկության կողմից թողարկվող արտադրանքի տեսականիում,

1.3. անվանացանկային խմբերի կտրվածքով տեսականու գարզացման հավանականությունը,

1.4. արտադրանքի որակը,

1.5. իրացման ծավալի փոփոխությունը,

1.6. ֆինանսական անկախությունը,

1.7. գործարար ակտիվությունը,

1.8. վճարունակությունը և ակտիվների իրացվելիությունը,

1.9. իրացման շահութաբերությունը,

2. մրցակցային ռազմավարության ընտրության շուկայական պայմանները բնութագրող հայտանիշներ՝

2.1. վարկավորման միջին տոկոսադրույթը,

2.2. թողարկվող արտադրանքի կյանքի պարբերաշրջանի տևողությունը,

2.3. շուկայի գարզացման դիմանիկան և բնույթը,

2.4. պահանջարկի գնային ճկունությունը:

Այժմ հիմնավորենք ծեռնարկության ներքին ներուժը բնութագրող հայտանիշները, որոնք նպաստում են մրցակցային ռազմավարության ապահովման գործընթացին: Այսինքն՝ հիմնավորելով նշված հայտանիշների ընտրությունը որոշենք դրանց համապատասխան ռազմավարությունը:

Նարկ է նշել, որ մրցակցային ռազմավարության մշակման համար անհրաժեշտ է հաշվի առնել ծեռնարկություններում արտադրանքի կյանքի պարբերաշրջանի գերակա փուլը, որը որոշվում է «շուկայի աճ, շուկայի մասնաբաժին» մատրիցին համապատասխան (գծապատկեր 1):

	Անվանացանկային խմբերի բաժինը ծեռնարկության ապրանքաշրջանառությունում		
Ծուկայի աճի տեմպ	Կյանքի պարբերաշրջանի 2-րդ փուլ՝ աճ	Կյանքի պարբերաշրջանի 1-ին փուլ՝ ներդրում	բարձր
	Կյանքի պարբերաշրջանի 3-րդ փուլ՝ հագեցում	Կյանքի պարբերաշրջանի 4-րդ փուլ՝ անկում	ցածր
	բարձր	ցածր	

Գծապատկեր 1. Ծեռնարկության արտադրանքի անվանացանկի բաշխումը՝ ըստ կյանքի պարբերաշրջանի փուլերի

Արդյունարերական արտադրանք ունեցող ծեռնարկությունների արտադրանքի կյանքի պարբերաշրջանի գերակա փուլի սահմանումը ենթադրում է թողարկված արտադրանքի իրացման աճի տեմպը շուկայում (T_{pj}), որը կարելի է որոշել հետևյալ կերպ՝

$$T_{pj} = \frac{QP_j}{\sum_{j=1}^n QP_j},$$

որտեղ՝ QP_j -ը՝ j-րդ ծեռնարկության արտադրանքի ամսական իրացումն է,

իսկ $\sum_{j=1}^n QP_j$ -ը՝ միջին ամսական իրացումը ո կազմակերպությունների

շրջանում:

Փորձագետների հարցման արդյունքները գուգակցելով մասնագիտական գրականությունում գոյություն ունեցող մոտեցումների հետ՝ արդյունարերական արտադրանքի կյանքի պարբերաշրջանի տևողությունը համարել ենք ցածր՝ 4 տարին, միջին՝ 6 տարին, իսկ բարձր՝ 6 տարուց ավելին:

Արտադրանքի անվանացանկային հավաքածուի շուկայական առաջխաղան հաջորդական որոշումների ընդունման կարգը կարելի է դիտարկել համապատասխան արտադրանքի մրցունակության աստիճանի սահմանամեջողով:

Ինչ վերաբերում է արտադրանքների անվանացանկային խմբերի արտադրության շահութաբերությանը, ապա այն կարելի է որոշել հետևյալ կերպ.

$$P_i = \frac{f(\bar{x})}{\lambda_i g_i(\bar{x})}$$

որտեղ $f(\bar{x})$ -ը $\bar{x} = (x_1, x_2, \dots, x_n)$ անվանացանկային խմբի իրացումից ստացված շահույթն է, իսկ $\lambda_i g_i(\bar{x})$ -ը $i = 1, 2, \dots, n$ օգտագործվող ռեսուրսների ծախսերն են:

Մեր կողմից կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ Չարենցավանի «Զուլակենտրոն» ԲԲԸ-ն, Երևանի «Ալմաստ» ԲԲԸ-ն և Երևանի «Հնատերստանոկ» ԲԲԸ-ն արտադրատեսակների իրացման ծավալներով ապահովել են հաճապատասխանաբար 20.5, 14.8 և 11.7% շահութաբերություն (այսուսակ 1):

Այսուսակ 1

**Ձեռնարկությունների տնտեսական ցուցանիշները
(ըստ ընտրանքային երեք ձեռնարկությունների)**

հազ. դրամ

Ցուցանիշները	Ձեռնարկությունների անվանումը		
	«Զուլակենտրոն» ԲԲԸ	«Ալմաստ» ԲԲԸ	«Հնատերստանոկ» ԲԲԸ
Իրացումից հասույթ	471971	114909	166996
Իրացումից շահույթ	96729	17026	19500.0
Իրացման շահութաբերություն, %	20.5	14.8	11.7

Մրցակցային ռազմավարության որոշման գործընթացում առանձնակի նշանակություն ունի թողարկվող արտադրանքի որակի մակարդակը, քանզի այն տվյալ արտադրանքի որակը ընութագրող ցուցանիշների համախմբի և արտադրանք-նմանակի հեռանկարային բազային ննուշի բազային ցուցանիշների համախմբի համեմատման հիման վրա տրվող որակի հարաբերական բնութագիրն է:

Յայտնի է, որ արտադրանքի որակի մակարդակի որոշման բազային ցուցանիշների կազմի ընտրությունը կախված է գնահատման նպատակից

կամ, այլ կերպ ասած, արտադրված արդյունքների հիման վրա ընդունվող ո-րոշումների բնույթից:

Արտադրամի մրցունակության մակարդակի գնահատումը կատարվում է արտադրանք-նմանակի տեխնիկական և տնտեսական համալիրային ցուցա-նիշների համեմատությամբ: Ընդհանուր մրցունակության ցուցանիշը որոշվում է.

$$K_c = T / E$$

բանաձևով, որտեղ

T -ն մրցունակության ցուցանիշն է՝ ըստ տեխնիկական ցուցանիշների, E -ն մրցունակության ցուցանիշը է՝ ըստ տնտեսական ցուցանիշների: Իր հերթին, ըստ տեխնիկական ցուցանիշների մրցունակության, ցուցա-նիշը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$T = \sum_{i=1}^m b_i \frac{q_i}{q_i^0} + \sum_{j=1}^n b_j \frac{q_j^0}{q_j} ,$$

որտեղ i -ն որակի այն ցուցանիշի համարն է, որի բացարձակ նշանակութ-յունը համապատասխանում է արտադրանքի ավելի բարձր որակին, $i=1\dots m$,

j -ն որակի այն ցուցանիշի համարն է, որի բացարձակ նշանակությունը համապատասխանում է արտադրանքի ավելի ցածր որակին, $j=1, \dots n$,

զի, զին համապատասխանաբար դիտարկվող արտադրանքի i -րդ և j -րդ ցուցանիշների բացարձակ արժեքներն են,

q_i^0 , q_j^0 -ն համապատասխանաբար որպես բազա ընդունված i -րդ և j -րդ ցուցանիշների բացարձակ արժեքները,

b_i , b_j -ն համապատասխանաբար i -րդ և j -րդ ցուցանիշների կարևորա-գույն գործակիցները:

Ըստ տնտեսական ցուցանիշների մրցունակության ցուցանիշը հաշվարկ-վում է

$$E = \sum_{k=1}^F F_k \cdot C_k / C_k^0$$

բանաձևով, որտեղ $F_k = Z^0 / C_k$ բազային արտադրանքի վաճառքի գնի Z^0 -րդ ծավալի բաժինն է (այլ կերպ՝ K -րդ տեսակի ծավալի կարևորագույն գործակիցը):

C_k -ն համեմատվող արտադրանքի վրա կատարվող ծախսերի արժե-

քային արտահայտությունն է ըստ K տեսակի ծավալի:

C_k^0 -ն բազային արտադրանքի արտադրության վրա կատարվող ծախսերի արժեքային արտահայտությունն է՝ ըստ K տեսակի ծավալի:

Այսպիսով՝ արտադրանքը մրցունակ է համարվում, եթե $K_k \geq 1$:

Նարկ է նշել, որ մրցակցային ռազմավարության արդյունավետության ապահովումը պայմանավորված է ճկուն գնային քաղաքականության իրականացմամբ, երբ հաշվի է առնվում թողարկվող արտադրանքի որակը:

Կատարված մարքեթինգային հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ սպառողների համար գոյություն ունեն գների ներքին և վերին սահմաններ, որոնց շրջանակներում արտադրանքի գինը ուղղակիորեն կախված է դրա որակից, քանի որ գնորդի համար գոյություն ունի հատուկ գնային սահման, որը նրա համար ընդունելի է: Այդ մակարդակը տարբեր գնորդների խնբերի համար տարբեր՝ կախված ինչպես նրանց սոցիալ-տնտեսական կարգավիճակից, այնպես էլ շուկայական պայմաններից:

Ակնհայտ է, որ արդյունաբերական նշանակություն ունեցող արտադրանքի համար տեխնիկական բնութագրերի բարելավումը իիմք է հանդիսանում սահմաննելու ավելի բարձր գներ: Այդ ցուցանիշը կարևոր գործոն է արտադրողի համար, քանզի դրա ազդեցությունը այլ հավասար պայմաններում ապահովում է բարձր արդյունավետություն: Ուստի պրակտիկայում, ինչպես արդյունաբերական, այնպես էլ լայն սպառման առարկաների գնային բնութագրերի գնահատման համար լայն կիրառություն է ստացել վիճակագրական վերլուծության մեթոդ՝ ըստ կորելացիոն-ռեգրեսիոն կախվածության, որի հիմքում ընկած է արտադրանքի տեխնիկական բնութագրերի և դրանց գների կապը:

Ընդհանուր տեսքով այդ կախվածությունը կարելի է ներկայացնել հետևյալ հավասարման տեսքով:

$$\Pi_{np} = b_0 K_1^{\beta_1}; K_2^{\beta_2}; \dots; K_n^{\beta_n}$$

կամ

$$\Pi_{np} \cdot a_0 + a_1 k_1 + a_2 k_2 + \dots + a_n k_n$$

որտեղ՝ Π_{np} -ն արտադրանքի գինն է,

k_1, k_2, \dots, k_n -ը արտադրանքի տեխնիկական բնութագրերն են,

β_1, \dots, β_n - ցուցանիշների աստիճանները,

a_1, \dots, a_n հավասարման գործակիցները,

ա և ե օ ն հավասարման ազատ անդամները:

Բերված հավասարման մեջ օգտագործված գործակիցները հնարավորություն են տալիս որոշելու ամեն մի ցուցանիշի աղբեցությունը արտադրանքի շուկայական գնի վրա:

Նշված կախվածությունը նպատակահարմար է կիրառել, եթե է վիճակագրական տվյալների միջև ձևավորել կայուն մաքենատիկական կազ:

Պարզ է, որ գնորդը աշխատանքի ծեռքբերման ժամանակ (հատկապես տեխնիկապես բարդ արտադրանքի) ուշադրություն է դարձնում ինչպես արտադրանքի գնին, այնպես էլ որևէ շահագործման ծախսերին (շահագործման գինը):

$$\Pi_{nTp} = \Pi_{np} + \sum_{t=1}^T 3_{t\text{ԵԿԸ}} ,$$

որտեղ՝ $3_{t\text{ԵԿԸ}}$ -ն շահագործման ծախսերն են:

Նետարար, մոցակիցների արտադրանքի ծեռքբերման ժամանակ գնորդն աշխատում է նվազագույնի հասցնել ամբողջական ծախսերը, այսինքն՝ $\Pi_{nTp} \rightarrow \min$:

Յարկ է նշել, որ գոյություն ունի որոշակի կապ շահագործման ծախսերի և ծեռք բերված արտադրանքի որակի միջև: Որպես կանոն, այդ կապը հակադարձ է և նպաստում է ապրանքի օգտագործման արդյունավետությանը: Այսպիսով՝ ապրանք արտադրողը լուծում է սպառողի այն հիմնախնդիրը, որ նա փոխհատուցում է՝ բարձր գնով ծեռք բերած արտադրանքը ավելի արդյունավետ շահագործելով, ապահովելով $\Pi_{nTp} \rightarrow \min$: Միաժամանակ, արտադրողը պետք է հիմնավորի (մարքեթինգային միջոցների շնորհիվ) այն առավելությունները, որոնք գնորդը կարող է ստանալ ծեռք բերված արտադրանքը օգտագործելիս:

Ուստի գնված արտադրանքի գինը կարելի է սահմանել հետևյալ արտահայտությամբ

$$\Pi_{np} = \Pi_{noTp} - \sum_t 3_{kcn} ,$$

որտեղ՝ $\sum_t 3_{kcn}$ արտադրանքի շահագործման բոլոր ծախսերն են այն շահագործելու ընթացքում:

Π_{noTp} - ծեռքբերման գիմն է:

Սակայն հարկ է նշել, որ տնտեսական պրակտիկայում շատ դեպքերում կիրառվում է նաև մոտեցում, երբ առաջարկվող ապրանքի գիմը հաշվարկվում է՝ հաշվի առնելով դրա որակը և մրցունակությունը.

$$f = \frac{k^\beta}{\Pi_{noTp}} :$$

Որպեսզի ապահովվի ապրանքի տեխնիկա-տնտեսական մրցակցության հավասար մակարդակ ($f_n / f_0 = f$), անհրաժեշտ է ապրանքի գիմը սահմանել հետևյալ կերպ.

$$\Pi_{np} = \left(\frac{K_n}{K_0} \right)^\beta \cdot \Pi_{noTp-3_{\text{ռկո}}}^{}$$

Որտեղ՝ Π_{noTp_0} - բազիսային արտադրանքի գիմն է:

$3_{\text{ռկո}}$ - ծախսերն են, որոնք կապված են նոր արտադրանքի շահագործման հետ դրա օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Յարկ է նշել, որ գնային ծկուն ռազմավարության իրականացումը հնարավորություն կտա ծեռնարկությանը՝ ճիշտ հատվածավորելու շուկամ ծեռքբելով նոր գնորդներ և ապահովելով մրցակցային առավելություն:

Իսկ երբ շուկա են մուտք գործում նոր, ուժեղ մրցակիցներ, որոնք կարող են նվազագույն ծախսերի ռազմավարության շնորհիվ ծեռք բերել նոր շուկայական որմնախորշեր և ապահովել մրցակցային առավելություն, ապա ծեռնարկությունը, հնարավոր է, չկարողանա իրականացնել առաջադրված ռազմավարությունը:

Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում տնտեսագիտության տեսության դասական մոտեցումը, ըստ որի՝ ծեռնարկությունը կարող է ապահովել բարձր եկամուտ արտադրանքի տվյալ գնի պայմաններում:

Այսպես, պահանջարկի ֆունկցիան արտահայտում է հետևյալ կերպ՝ $N = f(\Pi)$: Այս դեպքում արտադրանքի իրացումից եկամուտները կկազմեն $Q=Nu$: Գների իջեցման ժամանակ ($d u$) եկամուտների աճը կկազմի $dQ>j$, այսինքն՝ $\frac{dQ}{d\Pi} < 0$:

$$\text{Այստեղից } \frac{dQ}{d\pi} = \frac{dN}{d\pi} \cdot \pi + N \prec 0 \text{ կամ } \frac{dN}{d\pi} \cdot \pi + N \prec 0 :$$

Այս անհավասարության վերափոխումից կստանանք.

$$\frac{dN / N}{d\pi / \pi} = \prec 1 \text{ կամ } \frac{dN / N}{d\pi / \pi} = \exists \succ 1 :$$

Եթե $\exists > 1$, ապա եկամուտներն աճում են արտադրանքի գնի իշեցման հաշվին:

Մրցակցային ռազմավարության որոշման համար նշանակալի դեր ունի նաև մրցակցության ինտենսիվության որոշումը, քանի որ կառավարչական որոշումները ընդունելիս կարևոր է հաշվի առնել մրցակիցների հակագրեցությունը: Մրցակցության ինտենսիվության գնահատման ժամանակ կարևոր է առանձնացնել այն հիմնական գործոնները, որոնք ունեն եական նշանակություն: Այսպիսի գործոնները, մեր կարծիքով, կարող են հանդիսանալ՝

- շուկայական մասնաբաժնի բաշխումը մրցակիցների միջև,

- շուկայի աճի տեմպը,

- շուկայի շահութաբերությունը:

Դեռվելով երեք պատահական մրցակիցների շուկայական մասնաբաժնների սահմանային համամասնությունների վրա՝ հարկ է նշել, որ ուսումնասիր-վոր ընկերությունները ներքին շուկայում ունեն մոնոպոլ դիրք, նրանց շուկայական մասնաբաժնները համապատասխանաբար կազմել են 100, 91.2, 68%:

Քանի որ ծեռնարկության շուկայական պահանջարկը արտացոլող կարևոր ցուցանիշներից է համարվում արտադրանքի տեսականու իրացվելիության աստիճանը, ուստի նշված ընկերություններից ստացված տեղեկատվությունը հնարավորություն ընծեռեց հաշվարկելու իրացվելիության գործակիցները, որոնք են բացարձակ, արագ և նմթացիկ իրացվելիությունը: Դաշվարկների արդյունքները ցույց են տալիս, որ այդ գործակիցները բոլոր երեք ուսումնասիրվող ընկերություններում ել բավարարում են տվյալ նակարդակը բնութագրող նորմատիվային արժեքներին (≥ 0.25 , ≥ 1.0 , ≥ 2.0):

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ընկերությունները ապահովել են կայուն ֆինանսական վիճակ, քանզի նրանք կարողացել են ծևափորել ակտիվների ծկուն կառուցվածք. այսպես՝ ֆինանսական անկախության, ֆինանսական ռիսկի և ֆինանսական կախվածության գործակիցները բավարարում են նորմատիվային արժեքները:

Շուկայական պայմանները բնութագրող հատկանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրված ձեռնարկությունների թողարկած արտադրատեսակները բավարարում են ներքին շուկայի պահանջնունքները: Սակայն արտադրանք թողարկող ձեռնարկությունների մրցակցության վերլուծության համար անհրաժեշտ է հաշվարկել շուկայի յուրաքանչյուր նաևնակցի մասնաբաժինը:

Ներքին շուկայում այդ ձեռնարկությունների մրցակցության միջին մակարդակը միատեսակ չէ:

Մրցակցային ռազմավարության ընտրության կարևոր հայտանիշներից է արտադրանքի կյանքի պարբերաշրջանը, ուստի դրա ընտրությունն ունի կարևոր նշանակություն: Չնայած արտադրանքի շուկայի տնտեսական ցիկլի կյանքի տևողությունը համապատասխանեցվում է արտադրության պարբերաշրջանին, այնուամենայնիվ մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն նպատակահարմար է սահմանել ավելի քան 6 տարի: Արտադրանքի կյանքի պարբերաշրջանի նման հիմնավորումը պայմանավորված է նրանով, որ տվյալ ձեռնարկությունները համարված են անհրաժեշտ սարքավորություններով, որակյալ կադրերով, իսկ արտադրանքի նորացման տեմպերը համեմատաբար բարձր են ճյուղում:

Այսպիսով՝ վերոհիշյալ մոտեցումները հնարավորություն են տալիս ձեռնարկություններին ձևավորելու մրցակցային ռազմավարության առավել ընդգրկում և համակարգված մոտեցում:

Բանալի բառեր - մրցակցային ռազմավարություն, որակ, նորարարություն, արտադրանքի կյանքի պարբերաշրջան, շուկայի աճի տեմպ, շուկայի շահութաբերություն

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ефремов, В. С.**, Стратегия бизнеса. концепции и методы планирования.- М.: Финпресс.- Выходит раз в два месяца 2010.
2. Оценка бизнеса / Под ред. А. Г. Грязновой, М. А. Федотовой. Учебник. - Москва: Финансы и статистика, 2009.

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ РАЗРАБОТКИ НОВОГО ВИДА ПРОДУКЦИИ И СТРАТЕГИЯ ЕЕ ПРОДВИЖЕНИЯ НА РЫНКЕ

В. О. АРАКЕЛЯН

Кандидат экономических наук, доцент

А. А. МАРГАРЯН

Преподаватель ГГУ

Р. М. МАРТИРОСЯН

Экономист

В статье рассматриваются стратегические подходы продвижения на рынке продукции, разрабатываемой и выпускаемой организациями.

В основе лежат стратегические подходы координационных и минимальных расходов. Предлагается метод продвижения на рынке.

SOME ISSUES ON THE STRATEGY FOR A NEW PRODUCTION AND ITS PROGRESS IN THE MARKET

V. H. ARAKELYAN

Candidate of Economics, Associate Professor

H. A. MARGARYAN

GSU Lecturer, Assistant

R. M. MARTIROSYAN

Economist

The strategic approaches in the progress of selling products made and released by companies are discussed in the article. On the grounds of the right approach lie the strategic approaches of maximum and minimum expenses. In the article the method of the progress in market economy has been suggested.